



**ՀՖՖ ԸՆՏՐԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
2020թ. խմբագրություն**

ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բոլոր համապատասխան դեպքերում սույն Ընտրական կանոնակարգում կիրառվող հասկացություններն ունեն չեն նախատեսված «Մահմանումներ» բաժնով սահմանված իմաստը:

Նշում. Ֆիզիկական անձ մատնանշող բոլոր հասկացությունները վերաբերում են երկու սեռերին: Եզակի թվով կիրառվող ցանկացած հասկացություն վերագրելի է նույն հասկացության հոգնակիին և հակառակը:

DEFINITIONS

Whenever relevant, the terminology used in this Electoral Code shall refer to the terms defined in the Definitions section of the Statutes of FFA.

NB: Terms referring to natural persons are applicable to both genders. Any term in the singular applies to the plural and vice versa.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1 Կիրառման շրջանակ

Սույն Ընտրական կանոնակարգը կիրառվում է Գործադիր կոմիտեի (այդ թվում՝ Նախագահի), ինչպես նաև ՀՖՖ-ի Կանոնադրությամբ սահմանված անկախ կոմիտեների անդամների ընտրությունների նկատմամբ:

Հոդված 2 Սկզբունքներ և պարտավորություններ

¹ Ընտրական ողջ գործընթացում պետք է կիրառվեն պատշաճ կառավարման հիմնական սկզբունքները, ինչպիսիք են լիազորությունների տարանջատումը, անկախությունը, թափանցիկությունը և շահերի բախումներից խուսափելու պարտականությունը, առանց բացառության:

² Ժողովի ընթացքում կամ ընտրությունների գործընթացում երրորդ անձանց ցանկացած անպատշաճ ազդեցություն անթույլատրելի է: ՀՖՖ-ն պարտավոր է անհապաղ տեղեկացնել ՖԻՖԱ-ին և ՈՒԵՖԱ-ին ընտրությունների գործընթացում երրորդ անձանց ցանկացած անպատշաճ ազդեցության վերաբերյալ:

³ ՀՖՖ-ն պարտավոր է ապահովել իր համապատասխան մարմինների հանդեպ կիրառվող ցանկացած ընտրական կանոնների ու ուղեցույցների համապատասխանությունը սույն Ընտրական կանոնակարգի, ՀՖՖ-ի Կանոնադրության, ինչպես նաև ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի Կանոնադրությունների, կանոնակարգերի, կարգադրությունների և որոշումների դրույթներին:

⁴ Համապատասխան ընտրություններ անցկացնելու ամսաթվից առնվազն 30 օր առաջ ՀՖՖ-ն պարտավոր է տեղեկացնել ՖԻՖԱ-ին և ՈՒԵՖԱ-ին ընտրությունների բնույթի մասին (այն է՝ ընտրվող անդամների թիվը, պաշտոնավարման ժամկետը, ընտրությունների անցկացման պատճառը և այլն) և տրամադրել ՖԻՖԱ-ին և ՈՒԵՖԱ-ին իր գործող Ընտրական կանոնակարգի և, կիրառելիության դեպքում, ընտրական այլ կանոնների ու ուղեցույցների պատճենները:

⁵ ՀՖՖ-ի Կանոնադրությամբ և կանոնակարգերով այլ բան սահմանված չլինելու դեպքում ՀՖՖ-ի համապատասխան մարմինների

I. GENERAL PROVISIONS

Article 1 Scope of application

This Electoral Code is applicable to the elections of the members of the Executive Committee (including the President) and of the independent committees, as defined in the Statutes of FFA.

Article 2 Principles and obligations

¹ General good governance principles, such as the separation of powers, independence, transparency, and the obligation to avoid situations of conflicts of interest shall be observed without exception throughout the entire electoral process.

² Any undue influence from third parties in the Assembly or the electoral process shall not be permitted. FFA shall immediately inform FIFA and UEFA of any undue influence from third parties in the electoral process.

³ FFA shall ensure that any electoral rules and guidelines of its bodies are in line with the provisions of this Electoral Code, the Statutes of FFA as well as the Statutes, regulations, directives and decisions of FIFA and UEFA.

⁴ FFA shall, at least 30 days before the date of the relevant elections, inform FIFA and UEFA about the nature of the elections (i.e. number of members to be elected, duration of mandates, reason for the elections, etc.) and provide FIFA and UEFA with a copy of its valid Electoral Code and, if applicable, any other electoral rules and guidelines.

⁵ Unless stated otherwise in the Statutes and regulations of FFA, the members of the relevant bodies of FFA shall continue to exercise their functions until

անդամները պարտավոր են շարունակել իրենց գործառույթների կատարումը մինչև ընտրությունների գործընթացի ավարտը: Նորընտիր մարմինների համապատասխան լիազորությունների կատարումը կսկսվի այդ մարմիններին ընտրած Ժողովի փակումից հետո:

II. ԸՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հոդված 3 Հիմնական սկզբունքներ

¹ Ընտրական կոմիտեն պարտավոր է. (ա) վերահսկել ընտրությունների գործընթացը, (բ) կատարել ընտրվելու իրավունքի ստուգում, և (գ) կատարել համապատասխանության ստուգում ՀՖՖ-ի Կանոնադրության և սույն Ընտրական կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն:

² Ընտրական կոմիտեի անդամները չեն կարող հանդիսանալ ՀՖՖ-ի մեկ այլ մարմնի անդամ և չեն կարող որևէ ղեկավար պաշտոն զբաղեցնել իշխանության որևէ մարմնում: Ընտրական կոմիտեի անդամները, իրենց լիազորությունների կատարման ողջ ընթացքում, չեն կարող ներկայացվել որպես ՀՖՖ-ում որևէ այլ պաշտոն զբաղեցնելու թեկնածու:

³ Ընտրական կոմիտեի անդամները պարտավոր են անհապաղ դուրս գալ ուսումնասիրվող որևէ հարցի քննարկումից և զերծ մնալ որևէ որոշում կայացնելուց, եթե. ա) Ընտրական կոմիտեի անդամները հանդիսանում են թափուր պաշտոններից որևէ մեկի թեկնածու հանդիսացող անձանց ընտանիքի անդամ, բ) առկա է շահերի բախման ռիսկ կամ հավանականություն, համաձայն ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կանոնակարգի:

⁴ Եթե Ընտրական կոմիտեի անդամը չի կատարում վերոնշյալ պահանջներից որևէ մեկը և/կամ որևէ պատճառով այլևս չի կարող կատարել Ընտրական կոմիտեի անդամի պարտականությունները, նա պետք է փոխարինվի սույն Ընտրական կանոնակարգի 4-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

⁵ Ընտրական կոմիտեի անդամները նշանակվում են Ժողովի կողմից չորս տարի պաշտոնավարման ժամկետով ՀՖՖ-ի Կանոնադրության դրույթներին համապատասխան:

the completion of the electoral process. The respective mandate of the newly elected bodies, will start after the closing of the Assembly by which they are elected.

II. ELECTORAL COMMITTEE

Article 3 Basic principles

¹ The Electoral Committee shall: a) supervise the electoral process; b) conduct the eligibility check; and c) conduct the integrity checks, in accordance with the relevant provisions of the Statutes of FFA and of this Electoral Code.

² The members of the Electoral Committee shall not be members of any other body of FFA and may not hold any executive position in any government body. Members of the Electoral Committee may not be candidates for any of the positions to be filled within FFA as long as they are still under mandate.

³ The members of the Electoral Committee shall immediately withdraw from the matter in progress and refrain from taking any decision if: a) they are an immediate family member of one of the candidates running for any of the positions to be filled; b) there is a risk or possibility of a conflict of interest as defined in the Disciplinary and Ethics Code of FFA.

⁴ In the event that a member of the Electoral Committee does not fulfil any of the above requirements and/or has to step down as member of the Electoral Committee for any reason, he shall be replaced in accordance with the provisions of art. 4 par. 3 of this Electoral Code.

⁵ The members of the Electoral Committee shall be appointed by the Assembly, in accordance with the provisions of the Statutes of FFA, for a mandate of four years.

6 Ընտրական կոմիտեի որևէ անդամ չի կարող պաշտոնավարել երկու ժամկետից ավելի (անընդմեջ կամ ընդհատումներով):

7 Ընտրական կոմիտեի անդամները մշտապես պարտավոր են գործել բարեխիղճ և կատարել իրենց պարտականություններն առավելագույն անաչառությամբ:

Հոդված 4 Կազմը

1 Ընտրական կոմիտեն կազմված է.

- ա) նախագահից,
- բ) երկու անդամներից, որոնցից մեկը նշանակվում է որպես փոխնախագահ:

2 Ժողովը պարտավոր է նշանակել նաև համապատասխան թվով փոխարինողների:

3 Նախագահի բացակայության կամ նրա կողմից լիազորությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է փոխնախագահը, իսկ եթե վերջինս նույնպես բացակայում է կամ չի կարող կատարել այդ լիազորությունները, ապա որպես փոխարինող է հանդես գալիս անդամներից մեկը: Մյուս անդամներից ցանկացածի բացակայության կամ լիազորությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է նախապես նշանակված փոխարինող անձը:

4 Ընտրական կոմիտեն պարտավոր է իր անդամներից մեկին նշանակել որպես քարտուղար, որը պատասխանատվություն է կրում համապատասխան կազմակերպական և վարչական խնդիրների կարգավորման համար: Նա կարող է դիմել գլխավոր քարտուղարություն՝ իր պարտականությունների կատարման գործում իրեն աջակցելու խնդրանքով:

5 Ընտրական կոմիտեի նախագահը պետք է ունենա իրավաբանական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ որակավորում:

6 Ընտրական կոմիտեի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ստորագրել հայտարարություն այն մասին, որ նա համապատասխանում է Կանոնադրության 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված անկախության պահանջներին և Կանոնադրության 57-րդ կետի 3-րդ ենթակետով

6 No member of the Electoral Committee shall serve for more than two terms of office, whether consecutive or not.

7 The members of the Electoral Committee shall act in good faith at all times and observe the utmost impartiality when carrying out their duties.

Article 4 Composition

1 The Electoral Committee shall be composed as follows:

- a) a chairperson;
- b) two ordinary members, one of whom is appointed vice-chairperson.

2 An appropriate number of substitutes shall also be appointed by the Assembly.

3 If the chairperson is absent or unavailable, the vice-chairperson shall deputise, and if he too is absent or unavailable, then an ordinary member shall deputise. Any ordinary member who is absent or unavailable shall be replaced by a substitute.

4 The Electoral Committee shall appoint one of its members as a secretary, who shall be responsible for relevant logistical and administrative matters. He may call upon the general secretariat to assist him in his duties.

5 The chairperson of the Electoral Committee shall be qualified to practise law.

6 Each member of the Electoral Committee shall sign a declaration that they themselves satisfy the independence requirements set forth in clause 58 par. 2 of the Statutes and the integrity requirements set forth in clause 58 par. 3 of the Statutes. A member of

սահմանված համապատասխանության պահանջներին: Ընտրական կոմիտեի՝ սխալ հայտարարություն ներկայացրած անդամը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

the Electoral Committee that submits a false declaration shall be subject to disciplinary proceedings.

Հոդված 5 Ընտրական կոմիտեի պարտականությունները

Article 5 Duties of the Electoral Committee

Ընտրական կոմիտեն պատասխանատու է ժողովի ընթացքում իրականացվող ընտրությունների կազմակերպման, վարման և վերահսկման հետ կապված բոլոր աշխատանքների համար: Մասնավորապես, Ընտրական կոմիտեն պատասխանատու է հետևյալի համար.

The Electoral Committee shall be responsible for all tasks relating to the organisation, running and supervision of the elections to take place during the Assembly. In particular, the Electoral Committee shall be responsible for:

- ա) ՀՖՖ-ի Կանոնադրության և կանոնակարգերի, այդ թվում՝ սույն Ընտրական կանոնակարգի դրույթների խիստ պահպանում,
- բ) ՀՖՖ-ի մարմինների ընտրական կանոնների և ուղեցույցների համապատասխանության ապահովում ՀՖՖ-ի Կանոնադրության և սույն Ընտրական կանոնակարգի, ինչպես նաև ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի Կանոնադրությունների, կանոնակարգերի, կարգադրությունների և որոշումների դրույթներին,
- գ) ընտրությունների համար սահմանված ժամկետների խիստ պահպանում,
- դ) տեղեկատվության տրամադրում Անդամներին, ինչպես նաև (անհրաժեշտության դեպքում) համապատասխան իշխանության մարմիններին, լրատվական միջոցներին և հանրությանը, մասնավորապես (անհրաժեշտության դեպքում) մամուլի անցկացնելու միջոցով,
- ե) անհրաժեշտության դեպքում, համապատասխան իշխանության մարմինների հետ հարաբերությունների համակարգում,
- զ) թեկնածուների ներկայացման գործընթաց (նախաձեռնում, տեղեկատվության տարածում, գնահատում, պաշտոնական ցանկի հրապարակում և այլն),
- է) գլխավոր քարտուղարության աջակցությամբ Պատվիրակների ցանկը հաստատելը ՀՖՖ-ի սահմանած պարտադիր պահանջներին համապատասխան,
- ը) Պատվիրակների ինքնության և նրանց ներկայացուցչական լիազորությունների ստուգում,
- թ) ընտրությունների և քվեարկության գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ներառյալ՝ քվեաթերթիկների վավերության կամ անվավերության վերաբերյալ որոշումների ընդունում, ժողովի ժամանակ ընտրական գործընթացին վերաբերող ցանկացած հարցերի վերաբերյալ վերջնական որոշման ընդունում և պաշտոնական արդյունքների հայտարարում,

a) strictly enforcing the Statutes and regulations of FFA as well as this Electoral Code;

b) ensuring that the electoral rules and guidelines of the bodies of FFA are in line with the provisions of the Statutes of FFA and this Electoral Code as well as the Statutes, regulations, directives and decisions of FIFA and UEFA;

c) strictly enforcing the statutory deadlines for elections;

d) providing information to the Members as well as to relevant government authorities (where necessary), the media and the public, notably by holding a media conference (where necessary);

e) where necessary, managing relations with relevant government authorities;

f) the candidature procedure (launch, distribution of information, evaluation, publication of official list, etc.);

g) verifying the list of Delegates, assisted by the general secretariat, in accordance with the statutory provisions of FFA;

h) verifying the identity of the Delegates and their representative powers;

i) monitoring the electoral and voting procedure, including taking any decisions regarding the validity or invalidity of ballot papers, passing a definitive decision on any matters relating to the electoral procedure during the elective Assembly and declaring the official results;

ժ) ՀՖՖ-ի Կանոնադրությամբ սահմանված ընտրվելու իրավունքի չափանիշներին, անկախության և համապատասխանության պահանջներին համապատասխանելու վերաբերյալ ստուգումների իրականացում, և
ժա) ընտրությունների սահուն ընթացքի ապահովման համար անհրաժեշտ ցանկացած այլ աշխատանք:

j) performing checks regarding the fulfilment of the eligibility criteria, independence and integrity requirements stipulated in the Statutes of FFA; and

k) any and all other tasks to ensure the smooth running of the electoral process.

Հոդված 6 Նիստեր, քվորում և որոշումներ

Article 6 Meetings, quorum and decisions

¹ Ընտրական կոմիտեի նիստերը հրավիրում է կոմիտեի նախագահը: Որոշումներ քննարկել և ընդունել կարող է միայն պատշաճ կերպով հրավիրված՝ Ընտրական կոմիտեի նիստը:

¹ The chairperson shall convene the meetings of the Electoral Committee. Only an Electoral Committee that has been duly convened has the authority to deliberate and pass decisions.

² Ընտրական կոմիտեի կողմից քննարկումներ կարող են իրականացվել միայն կոմիտեի անդամների մեծամասնության (50%-ից ավելի) ներկայության դեպքում:

² The Electoral Committee shall not engage in valid debate unless a majority (more than 50%) of its members are present.

³ Ընտրական կոմիտեն որոշումներ է ընդունում վավեր ձայների մեծամասնությամբ (50%-ից ավելի): Ձեռնապահ քվեարկելը չի թույլատրվում: Լիազորագրի կամ նամակի միջոցով քվեարկությունն ընդունելի չէ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը որոշիչ է:

³ The Electoral Committee shall reach its decisions by a majority (more than 50%) of the valid votes cast. Abstentions are not permitted. Voting by proxy or by letter is not permitted. In the event of a tied vote, the chairperson shall have the casting vote.

⁴ Ընդունված որոշումները պետք է գրանցված լինեն Ընտրական կոմիտեի նախագահի և քարտուղարի կողմից ստորագրված արձանագրության մեջ:

⁴ The decisions taken shall be recorded in minutes signed by the chairperson and the secretary of the Electoral Committee.

III. ԹԵՎԸՆԱՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

III. CANDIDATURES

Հոդված 7 Թեկնածուներին ներկայացվող (ընտրվելու իրավունքի) չափանիշներ

Article 7 Eligibility criteria

¹ ՀՖՖ-ի համապատասխան մարմիններում առկա պաշտոնները զբաղեցնելու համար ներկայացվող չափանիշները սահմանված են ՀՖՖ-ի Կանոնադրության համապատասխան դրույթներով:

¹ The eligibility criteria for the positions to be filled within the relevant bodies of FFA are defined in the relevant provisions of the Statutes of FFA.

² Ընտրական կոմիտեն իրավունք չունի կիրառել ՀՖՖ-ի Կանոնադրությամբ չնախատեսված չափանիշներ կամ որևէ այլ պահանջներ, որոնք նախատեսված չեն ՀՖՖ-ի Կանոնադրությամբ կամ սույն

² The Electoral Committee shall not impose any eligibility criteria that are not provided for in the Statutes of FFA or any other formal requirements that are not provided for in the Statutes of FFA or in this

Ընտրական կանոնակարգով: Ընտրական կոմիտեն կարող է պահանջել միայն այնպիսի փաստաթղթեր, որոնց օգնությամբ կարելի է պարզել՝ արդյոք պահպանվել են համապատասխան չափանիշները:

³ Ընտրական կոմիտեն պարտավոր է ՀՖՖ-ի պաշտոնական կայքէջում հրապարակել թեկնածուներին ներկայացվող չափանիշների ամբողջական ցանկը (հղում կատարելով ՀՖՖ-ի Կանոնադրության համապատասխան դրույթներին), ինչպես նաև յուրաքանչյուր պաշտոնի առնչությամբ ՀՖՖ-ի Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում ներկայացման ենթակա փաստաթղթերը:

Electoral Code. The Electoral Committee shall only request the documents that help establish whether the relevant eligibility criteria have been fulfilled.

³ The Electoral Committee shall publish on the official website of FFA the full list of eligibility criteria (with reference to the relevant provisions of the Statutes of FFA), as well as the documents to be provided for each of the positions within the deadlines stipulated in the Statutes of FFA.

Հոդված 8 Գործադիր կոմիտեի թեկնածությունների ներկայացում և ուսումնասիրություն

¹ Ընտրությունների ողջ ընթացքում թեկնածուներից չի կարող պահանջվել որևէ վճար, բացառությամբ Ժողովի կողմից նախապես հաստատված վճարների: Ցանկացած պարագայում, համաձայնեցված վճարները պետք է ողջամիտ լինեն և ծառայեն միայն համապատասխան վարչական ծախսերը ծածկելու նպատակին:

² Գործադիր կոմիտեի ցանկացած պաշտոնի թեկնածությունները ներկայացվում են գլխավոր քարտուղարությանը փոստով, էլեկտրոնային փոստով՝ առաքման մասին համապատասխան ծանուցմամբ, կամ հանձնվում են առձեռն՝ ստացումը հավաստող ստացականի դիմաց, ընտրությունների անցկացման համար հրավիրվող Ժողովից առնվազն երեսուն (30) օր առաջ: Գլխավոր քարտուղարությանը ներկայացված թեկնածությունները պետք է անմիջապես տրամադրվեն Ընտրական կոմիտեի քարտուղարին՝ ընտրվելու իրավունքի և համապատասխանության ստուգումները ՀՖՖ-ի Կանոնադրության 30-րդ կետի 4-րդ ենթակետի և սույն Ընտրական կանոնակարգի Հավելված Ա-ի պահանջներին համապատասխան իրականացնելու համար:

³ Թեկնածությունների ներկայացման համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո երկու (2) օրվա ընթացքում Ընտրական կոմիտեն գրավոր տեղեկացնում է այն թեկնածուներին, ովքեր չեն ներկայացրել իրենց թեկնածություններին առնչվող բոլոր համապատասխան փաստաթղթերը, և տրամադրում է նրանց ևս երեք (3) օր՝ իրենց հայտերն

Article 8 Submission and examination of candidatures for the Executive Committee

¹ No fees or charges of any sort shall be requested from any of the candidates at any point during the entire electoral procedure, unless they have previously been approved by the Assembly. In any event, any fees or charges agreed upon shall remain reasonable and shall only serve to cover the costs of the relevant administrative burden.

² Candidatures for any of the positions of the Executive Committee shall be sent by recorded post, by email with delivery notification, or delivered by hand in exchange for confirmation of receipt, to the general secretariat at least thirty (30) days before the relevant elective Assembly. Candidatures received by the general secretariat shall immediately be forwarded to the secretary of the Electoral Committee for the relevant eligibility and integrity checks to be carried out as per clause. 30 par. 4 of the Statutes of FFA and Annexe A of this Electoral Code respectively.

³ Within two (2) days of the deadline for submission of the candidatures, the Electoral Committee shall inform in writing those candidates who have failed to provide all the relevant documents in support of their candidatures and grant them another three (3) days to complete their applications. If the relevant candidates fail to complete their

ամբողջականացնելու համար: Եթե այդ թեկնածուները լրացուցիչ ժամանակահատվածում չեն ամբողջականացնում իրենց հայտերը, ապա նրանց թեկնածություններն անվավեր են ճանաչվում: Սույն կետը չի կիրառվում Գանձնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված թեկնածություններին առնչվող փաստաթղթերը լրացնելու հնարավորության նկատմամբ և այդ փաստաթղթերը պետք է առանց խախտումների ներկայացվեն մինչև Գործադիր կոմիտեի թեկնածությունների ներկայացման համար սահմանված վերջնաժամկետի ավարտը:

4 Ընտրական կոմիտեն պետք է ուսումնասիրի Գործադիր կոմիտեում ընդգրկվելու համար ներկայացված թեկնածությունները դրանք ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո տասը օրվա ընթացքում, և թեկնածուները պետք է տեղեկացվեն Ընտրական կոմիտեի որոշման մասին նույն ժամանակահատվածում:

Հոդված 9 Բողոքարկման ընթացակարգ Գործադիր կոմիտեի թեկնածուների համար

1 Ընտրական կոմիտեի որոշումների դեմ բողոքները կարող են ներկայացվել միայն Բողոքարկման կոմիտեին, ինչը բացառում է նշված որոշումները որևէ այլ մարմնում, հատկապես՝ իշխանության/պետական մարմնում (ներառյալ, սակայն առանց սահմանափակվելու, Ընդհանուր իրավասության դատարաններում) բողոքարկելու հնարավորությունը:

2 Ցանկացած պատշաճ հիմնավորված բողոք պետք է ներկայացվի գլխավոր քարտուղարությանը պատվիրված փոստով կամ հանձնվի առձեռն՝ ստացումը հավաստող ստացականի դիմաց, Ընտրական կոմիտեի որոշումն ստանալուց հետո երեք (3) օրվա ընթացքում: Գլխավոր քարտուղարությանը ներկայացված բողոքները պետք է անմիջապես տրամադրվեն Բողոքարկման կոմիտեի անդամներին:

3 Բողոքարկման կոմիտեն չի կարող ընդունել ապացույցներ և փաստաթղթեր, որոնք ի սկզբանե չեն ներկայացվել թեկնածության հետ միասին:

4 Բողոքարկման կոմիտեն պետք է ուսումնասիրի բողոքները դրանք ստանալուց հետո չորս

applications within the prescribed deadline, their candidatures shall be declared invalid. This paragraph does not apply to the expressions of support stipulated in clause 30 par. 3 of the Statutes, which need to be submitted within the deadline for submission of the candidatures for the Executive Committee without failure.

4 The candidatures for the Executive Committee shall be examined by the Electoral Committee within ten days of the deadline for their submission and the candidates shall be informed of the decision of the Electoral Committee within the same period.

Article 9 Appeal procedure for candidates for the Executive Committee

1 Appeals against decisions of the Electoral Committee may be lodged only with the Appeals Committee, thereby precluding the possibility of appealing said decisions before any other body, particularly a government/state body (including, but not limited to any Ordinary Courts).

2 Any appeal, duly motivated, shall be sent by recorded post, or delivered in exchange for confirmation of receipt, to the general secretariat within three (3) days of receipt of the decision of the Electoral Committee. Appeals received by the general secretariat shall immediately be forwarded to the members of the Appeals Committee.

3 The Appeals Committee shall not accept evidence and documents that were not provided together with the initial candidature.

4 Appeals shall be considered by the Appeals Committee within four (4) days of their receipt and

(4) օրվա ընթացքում և տեղեկացնի թեկնածուներին որոշման մասին նույն ժամանակահատվածում:

⁵ Բողոքարկման կոմիտեն բողոքարկումները պետք է բավարարի, մերժի կամ որոշի, որ դրանք Բողոքարկման կոմիտեի կողմից քննության ենթակա չեն: Բողոքարկման բավարարման դեպքում Բողոքարկման կոմիտեն ըստ էության որոշում է կայացնում փոխելով Ընտրական կոմիտեի որոշումը:

⁶ Բողոքարկման կոմիտեի որոշումները վերջնական են և պարտադիր բնույթ են կրում:

communicated to the candidates within the same period.

⁵ Appeals shall be either upheld, dismissed or declared inadmissible by the Appeals Committee. In case the appeal is upheld, the Appeals Committee shall take a decision on the merits replacing the decision of the Electoral Committee.

⁶ The decisions of the Appeals Committee shall be final and binding.

Հոդված 10 ՀՖՖ-ի այլ մարմինների թեկնածուների ընտրության կարգ

¹ ՀՖՖ-ի մնացած բոլոր մարմինների (Աուդիտի և համապատասխանության կոմիտե, Ընտրական կոմիտե և իրավական մարմիններ) ցանկացած այլ պաշտոնի համար թեկնածությունները Գործադիր կոմիտեի կողմից գլխավոր քարտուղարությանն են ներկայացվում համապատասխան ընտրական Ժողովից առնվազն երեսուն (30) օր առաջ: Վեճերի լուծման պալատի ցանկացած պաշտոնի թեկնածությունները գլխավոր քարտուղարությանն են ներկայացվում Վեճերի լուծման պալատի կանոնակարգին համապատասխան: Գլխավոր քարտուղարությանը ներկայացված թեկնածությունները պետք է անմիջապես տրամադրվեն Ընտրական կոմիտեին, որը պատասխանատու է համապատասխանության ստուգումների կատարման համար:

² Թեկնածությունները ստանալուց հետո տասը (10) օրվա ընթացքում Ընտրական կոմիտեն պետք է տեղեկացնի գլխավոր քարտուղարությանը՝ արդյոք համապատասխան պաշտոններին ներկայացվող պահանջները պահպանվել են, թե ոչ: Այն դեպքում, եթե թեկնածուներից մեկը կամ մի քանիսը չի կարող հաստատվել, Գործադիր կոմիտեն պետք է առաջարկի լրացուցիչ թեկնածուներ համապատասխան պաշտոնների համար:

Article 10 Procedure for candidates for other bodies of FFA

¹ Candidatures for any of the positions of all other bodies of FFA (Audit and Compliance Committee, Electoral Committee and judicial bodies) shall be sent by the Executive Committee to the general secretariat at least thirty (30) days before the relevant elective Assembly. Candidature for any of the positions in the Dispute Resolution Chamber shall be submitted to the general secretariat in accordance with the regulations of the Dispute Resolution Chamber. Candidatures received by the general secretariat shall be immediately forwarded to the Electoral Committee in charge of carrying out the integrity checks.

² Within ten (10) days of receipt of the candidatures, the Electoral Committee shall confirm to the general secretariat whether the formal requirements for the relevant positions have been fulfilled. In the event that one or more candidates cannot be validated, the Executive Committee shall propose additional candidates for the relevant positions.

Հոդված 11 Թեկնածուների պաշտոնական ցանկ

Թեկնածուների պաշտոնական ցանկը պետք է հրապարակվի է նաև ՀՖՖ-ի պաշտոնական կայքէջում:

IV. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 12 Քվեաթերթիկներ

¹ Գլխավոր քարտուղարությունը պետք է կազմի քվեաթերթիկներն Ընտրական կոմիտեի հսկողության ներքո: Քվեաթերթիկները պետք է լինեն հստակ տպված և դյուրընթեռնելի: Միասնական ընտրացուցակով ընտրությունների դեպքում քվեաթերթիկները կարող են կազմվել թեկնածուների ցանկի ձևով:

² Քվեաթերթիկները պետք է՝

ա) բավականաչափ մեծ լինեն երկու անգամ հավասարաչափ ծավելու համար,

բ) պարունակեն կրկնօրինակման հնարավորությունը դժվարացնող կամ անհնարին դարձնող մեթոդների կիրառմամբ կատարված իսկության տարբերակիչ նշաններ (օրինակ՝ ընտրություններից անմիջապես առաջ զետեղված հոլոգրամ)՝ հավելյալ քվեաթերթիկներ ձեռք բերելու ռիսկից խուսափելու համար,

գ) պարունակեն թեկնածուների անուններն այբբենական կարգով: Թեկնածուների անունները պետք է գրված լինեն ճիշտ և ներկայացված լինեն նույն տառատեսակով, ձևով և չափով:

Այս եղանակով կազմված և նշումներ պարունակող քվեաթերթիկների քանակը պետք է համապատասխանի քվեարկող Պատվիրակների թվին:

³ Ընտրությունների յուրաքանչյուր փուլում կիրառվող քվեաթերթիկները պետք է լինեն տարբեր գույների:

Հոդված 13 Քվեատուփ

¹ Նախքան քվեարկությունը քվեատուփը (որը, հնարավորության դեպքում, պետք է թափանցիկ լինի) բացվում և ներկայացվում է Ժողովի

Article 11 Official list of candidates

The official list of candidates shall also be published on the official website of FFA).

IV. VOTING PROCEDURE

Article 12 Ballot papers

¹ The general secretariat shall produce the ballot papers under the supervision of the Electoral Committee. The ballot papers shall be printed clearly and legibly. The ballot papers may take the form of a list of candidates for the elections taking place en bloc.

² The ballot papers shall:

a) be large enough to be folded in half at least twice after voting;

b) be marked for authenticity in a distinctive fashion using a method that is difficult or impossible to duplicate (e.g. with a hologram that is applied shortly before the election) to avoid the risk of additional ballot papers being obtained.

c) list the names of the candidates in alphabetical order. Candidate names must be spelled correctly and must be presented in the same font, type and size.

Only as many ballot papers as there are voting Delegates should be created and marked in this fashion.

³ The ballot papers shall be of a different colour for each round of the election.

Article 13 Ballot box

¹ Before the start of the voting procedure, the ballot box – which shall be transparent if possible – shall be opened and presented to the Delegates of the

Պատվիրակներին: Ապա քվեատուփը փակվում և տեղադրվում է տեսանելի վայրում՝ Ընտրական կոմիտեի անդամների հարևանությամբ:

² Քվեարկության ողջ ընթացքում քվեատուփը պետք է հսկվի Ընտրական կոմիտեի անդամներից մեկի կողմից:

Assembly. The ballot box shall then be closed and placed in a visible spot close to the members of the Electoral Committee.

² During the entire voting process, the ballot box shall be monitored by one of the members of the Electoral Committee.

Հոդված 14 Քվեախցիկ

¹ Քվեախցիկը պետք է կառուցվի և տեղադրվի այնպես, որ քվեարկող անձը հետևից հստակ տեսանելի լինի առնվազն Ընտրական կոմիտեի անդամների (ցանկալի է նաև՝ Պատվիրակների) համար: Քվեաթերթիկի վրա նշումը պետք է կատարվի բացարձակ գաղտնի: Մասնավորապես, քվեախցիկը պետք է տեղակայվի այնպես, որ քվեարկող Պատվիրակը հնարավորություն չունենա, օրինակ, նկարահանել քվեաթերթիկը կամ փոխարինել քվեաթերթիկը գրպանում պահված մեկ այլ քվեաթերթիկով՝ առանց բացահայտված լինելու:

² Քվեախցիկում պետք է լինի մեկ գրիչ: Առնվազն մեկ հավելյալ գրիչ պետք է հասանելի լինի առաջին գրիչի անսարքության դեպքում:

Article 14 Voting booth

¹ The voting booth should be constructed and placed in such a way that the person casting a vote can be clearly seen from behind by at least the members of the Electoral Committee (and ideally also by the Delegates). The actual marking of the ballot paper should be absolutely secret. In particular, the voting booth must be situated so that it would be impossible for a voting Delegate to (for example) take a photograph of the ballot paper, or to exchange the ballot paper with another placed in a pocket, without being observed.

² The voting booth should be equipped with a voting pen. At least one backup pen should be available in the event of the failure of this pen.

Հոդված 15 Քվեարկության նախապատրաստումը

¹ Ընտրություններից առաջ Ընտրական կոմիտեի անդամները Գլխավոր քարտուղարի և հաշվիչ հանձնաժողովի անդամների հետ միասին պարտավոր են հաշվել յուրաքանչյուր ընտրության համար անհրաժեշտ քվեաթերթիկների քանակը, հավաստիանալ, որ յուրաքանչյուր քվեաթերթիկը պարունակում է իսկության նշան (օրինակ՝ հոլոգրամ), և Ընտրական կոմիտեի անդամներից մեկը պարտավոր է ստորագրել յուրաքանչյուր քվեաթերթիկի դարձերեսի վրա հասկանալի ձևով: Քվեաթերթիկները ստորագրելու պրակտիկան կապահովի քվեարկության գործընթացի ամբողջականությունը: Ընտրական կոմիտեի անդամները պետք է այնուհետև տեղադրեն ստորագրված քվեաթերթիկները ծրարում, որը ստորագրվում է Ընտրական կոմիտեի անդամների կողմից ծրարի փակման գծի երկայնքով:

Article 15 Preparation of the casting of ballots

¹ Shortly before the election, the members of the Electoral Committee together with the General Secretary and the scrutineers shall count out the requisite number of ballot papers for each election, verify that each ballot paper is marked with the mark of authenticity (e.g. a hologram), and one of the members of the Electoral Committee shall initial each ballot paper on the reverse in a distinctive and recognisable fashion. This practice of initialling will ensure the integrity of the ballot process. The initialled ballot papers should then be placed, by the members of the Electoral Committee, in an envelope and sealed with their signature across the flap.

² Ընտրություններից անմիջապես առաջ քվեաթերթիկներով ծրարը պետք է բացվի Ընտրական կոմիտեի անդամների, Գլխավոր քարտուղարի և հաշվիչ հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Քվեաթերթիկները լիազորված Պատվիրակների վերջնական ցուցակի հետ միասին պետք է այնուհետև տրամադրվեն այն պաշտոնատար անձին, որին կհանձնարարվի ստուգել Պատվիրակների լիազորությունները և քվեաթերթիկ տրամադրել յուրաքանչյուր Պատվիրակին մինչև այդ Պատվիրակի քվեարկելը:

Հոդված 16 Քվեարկության կարգը

¹ Նախքան Պատվիրակների քվեարկելը, Ընտրական կոմիտեի նախագահը մանրամասնորեն բացատրում է ընտրական գործընթացը (քվեատուփ, քվեաթերթիկներ, վավեր և անվավեր քվեաթերթիկներ, ձայների հաշվարկ, ձայների պահանջվող մեծամասնություն, արդյունքներ և այլն) և վկայակոչում է համապատասխան դրույթները:

² Ընտրական կոմիտեի նախագահը հերթով Ժողովի դահլիճի (որտեղ անցկացվում են ընտրությունները) սկզբնամաս է հրավիրում նիստին ներկա գտնվող և ձայնի իրավունք ունեցող յուրաքանչյուր Պատվիրակին:

³ Համապատասխան Պատվիրակին հրավիրելու դեպքում նա մոտենում է Ժողովի դահլիճի սկզբնամաս և ստանում է իր քվեաթերթիկը՝ քվեաթերթիկի ստացումը հավաստող ձևաթուղթը ստորագրելուց հետո:

⁴ Ընտրական կոմիտեի անդամը պետք է հարցնի Պատվիրակին՝ արդյոք նա իր մոտ ունի բջջային հեռախոս: Եթե այո, ապա այն պետք է թողնվի քվեախցիկից դուրս և այնուհետև Ընտրական կոմիտեի անդամը պետք է տրամադրի Պատվիրակին քվեաթերթիկ, խնդրի Պատվիրակին դրանում նշում կատարել տրամադրված գրիչով և երկու անգամ ծալել այն հավասարաչափ մասերով մինչև քվեախցիկից դուրս գալը: Ընտրական կոմիտեի անդամն այնուհետև պետք է ցուցակում ընդգրկված Պատվիրակի անվան դիմաց նշում կատարի հաստատելու համար, որ քվեաթերթիկը տրամադրվել է Պատվիրակին:

⁵ Պատվիրակն իր քվեաթերթիկը լրացնում է քվեախցիկում և երկու անգամ հավասարաչափ ծալում է

² Immediately before the election, the envelope of ballot papers should be opened in the presence of the members of the Electoral Committee, the General Secretary and the scrutineers. The ballot papers should then be given, along with the final list of authorised voting Delegates, to the official who will be charged with checking the Delegates' credentials and handing a ballot paper to each Delegate before that Delegate votes.

Article 16 Casting of ballots

¹ Before the Delegates are requested to cast their vote, the chairperson of the Electoral Committee shall explain in detail the electoral procedure (ballot box, ballot papers, valid and invalid ballot papers, count, required majorities, results, etc.) and refer to the relevant statutory provisions.

² The chairperson of the Electoral Committee shall call in turn each Delegate present and eligible to vote to move to the front of the Assembly hall where the election is taking place.

³ Once called, the relevant Delegate shall move to the front of the Assembly hall and, after signing receipt of the ballot paper form, receive his ballot paper.

⁴ A member of the Electoral Committee should ask the Delegate whether he or she has a mobile phone; if so, it should be left outside the voting booth, then give the Delegate a ballot paper and instruct the Delegate to mark it with the pen provided and to fold it in half twice before leaving the voting booth. A member of the Electoral Committee should then place a mark against the Delegate's name on the list to show that the Delegate has been issued with a ballot paper.

⁵ The Delegate shall then complete his ballot paper in the voting booth and fold it in half twice before

այն մինչև քվեատուփի մեջ գցելը: Քվեախցիկում բջջային հեռախոսների, տեսախցիկների կամ ձայնագրող այլ սարքերի օգտագործումն արգելված է:

⁶ Պատվիրակը գցում է քվեաթերթիկը քվեատուփի մեջ, ստորագրում է ընտրությունների գրանցամատյանում և վերադառնում է իր տեղը:

⁷ Հաշվարկի գործընթացը պետք է մեկնարկի բոլոր Պատվիրակների կողմից քվեաթերթիկները քվեատուփի մեջ գցելուց հետո: Ընտրական կոմիտեի անդամներից մեկը բացում է քվեատուփը և բոլոր Պատվիրակների ներկայությամբ հանում է այնտեղից քվեաթերթիկները:

⁸ Ապա մեկնարկում է հաշվարկը:

depositing it in the ballot box No mobile phones, cameras or any other recording devices shall be allowed in the voting booth.

⁶ The Delegate shall then deposit his ballot paper in the ballot box, sign the electoral register and return to his seat.

⁷ The counting procedure shall begin as soon as all of the Delegates have deposited their ballot papers in the ballot box. A member of the Electoral Committee shall open the ballot box and tip out the ballot papers in front of all the Delegates.

⁸ The count shall then commence.

V. ՀԱՇՎԱՐԿ

Հոդված 17 Հիմնական սկզբունքեր

¹ Քվեաթերթիկների հաշվարկին պետք է մասնակցեն միայն Ընտրական կոմիտեի անդամները, Գլխավոր քարտուղարը և հաշվիչ հանձնաժողովի անդամները: Բոլոր գործողությունները (քվեատուփի բացում, քվեաթերթիկների հաշվարկ, ձայների հաշվարկ և այլն) պետք է իրականացվեն Ժողովի բոլոր Պատվիրակների համար հստակ վերահսկելի եղանակով:

² Քվեաթերթիկի կամ քվեարկության, արձանագրությունը կազմելու, արդյունքների հրապարակման կամ հաշվարկի գործընթացի վավերության կամ անվավերության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում Ընտրական կոմիտեի որոշումը վերջնական է:

Հոդված 18 Անվավեր քվեաթերթիկներ

¹ Անվավեր են համարվում հետևյալ քվեաթերթիկները.

ա) քվեաթերթիկներ, որոնց վրա առկա չեն Ընտրական կոմիտեի սահմանած պաշտոնական տարբերակիչ նշանները,

բ) քվեաթերթիկներ, որոնց վրա թեկնածուների անուններից բացի նաև այլ բառեր են գրված,

V. COUNT

Article 17 General principles

¹ Only the members of the Electoral Committee, the General Secretary and the scrutineers shall take part in the count of the ballot papers. All operations (opening the ballot box, counting the ballot papers, counting the votes, etc.) shall be carried out in a way that can be followed clearly by all the Delegates of the Assembly.

² In the event of a dispute regarding the validity or invalidity of a ballot paper or of a vote, the drafting of the minutes, the declaration of the results or any other matter relating to the counting procedure, the decision of the Electoral Committee shall be final.

Article 18 Invalid ballot papers

¹ The following ballot papers are considered invalid:

a) ballot papers that do not bear the official distinctive marks defined by the Electoral Committee;

b) ballot papers that bear any words other than the names of the candidates;

զ) անընթեռնելի կամ վնասված քվեաթերթիկներ,
դ) քվեաթերթիկներ, որոնց վրա առկա են նույնականացնող նշաններ:

c) ballot papers that are illegible or have been defaced;
d) ballot papers that bear identifying marks.

² Ընտրական կոմիտեի նախագահը յուրաքանչյուր անվավեր քվեաթերթիկի հակառակ կողմում պետք է նշի քվեաթերթիկի անվավերության պատճառ(ներ)ը և հաստատի դա ստորագրությամբ:

² The chairperson of the Electoral Committee shall write on the back of any invalid ballot paper the reason(s) for its invalidity and confirm with a signature.

Հոդված 19 Արդյունքների հաշվարկ և հայտարարում

Article 19 Count and declaration of results

¹ Քվեատուփը բացվում է և դրա պարունակությունը դատարկվում է սեղանի կամ այլ հարթ և մաքուր մակերեսի վրա:

¹ The ballot box should be opened and its contents emptied onto a table or other flat, clear surface.

² Քվեատուփը բացելուց հետո Ընտրական կոմիտեի անդամները, Գլխավոր քարտուղարը և հաշվիչ հանձնաժողովի անդամները պետք է զգուշորեն հաշվեն քվեաթերթիկների քանակը և ստուգեն դրանց վավերությունը՝ հավաստիանալով, որ յուրաքանչյուր քվեաթերթիկը պարունակում է իսկության նշան (օրինակ՝ հոլոգրամ), որ Ընտրական կոմիտեի անդամներից մեկը ստորագրել է յուրաքանչյուր քվեաթերթիկը և որ քվեաթերթիկների թիվը չի գերազանցում փաստացի տված ձայների թիվը: Եթե պատշաճ իսկության նշան (օրինակ՝ հոլոգրամ) և Ընտրական կոմիտեի անդամներից մեկի ստորագրությունը պարունակող քվեաթերթիկների քանակը հավասար կամ պակաս է բաժանված քվեաթերթիկների քանակից, ապա քվեարկությունը վավեր է: Եթե քվեաթերթիկների քանակը գերազանցում է բաժանված քվեաթերթիկների թիվը, ապա քվեարկությունը հայտարարվում է անվավեր և անհապաղ վերսկսվում է վերոնշյալ ընթացակարգին համապատասխան:

² Once the ballot box has been opened, the members of the Electoral Committee, the General Secretary and the scrutineers shall carefully count the number of ballot papers and verify their validity by making sure that each ballot paper has been marked with a mark of authenticity (e.g. a hologram), that each ballot paper has been initialled by a member of the Electoral Committee, and that the number of ballot papers does not exceed the number of votes actually cast. If the number of ballot papers appropriately marked for authenticity (e.g. a hologram) and with the initials of the members of the Electoral Committee is equal to or less than the number of ballot papers issued, the ballot is valid. If it exceeds the number of ballot papers issued, the ballot shall be declared void and recommence immediately in accordance with the procedure described above.

³ Քվեաթերթիկների քանակը ստուգելուց հետո Ընտրական կոմիտեի անդամները պետք է հաշվեն յուրաքանչյուր թեկնածուի կամ ցանկի օգտին տրված ձայները:

³ After the number of ballot papers has been verified, the members of the Electoral Committee shall proceed to count the number of votes cast for each candidate or list.

⁴ Ընտրական կոմիտեի անդամները, Գլխավոր քարտուղարը և հաշվիչ հանձնաժողովի անդամները պարտավոր են ուշադիր հաշվել յուրաքանչյուր թեկնածուի օգտին տված ձայները: Ձայների հաշվարկում ընդգրկված յուրաքանչյուր անձ պարտավոր է վարել տված ձայների առանձնացված հաշվարկ: Ձայների վավերությանը կամ քվեարկողի

⁴ The votes for each candidate shall be counted carefully by the members of the Electoral Committee, the General Secretary and the scrutineers. Each person involved in the count shall keep a separate tally of votes cast. Uncertainties about the validity of votes or about a voter's intended vote shall be resolved by discussion and consensus among the members of

կամ արտահայտությանը վերաբերող անհաստատությունները լուծվում են Ընտրական կոմիտեի անդամների քննարկման և համաձայնության միջոցով: Եթե Ընտրական կոմիտեի բոլոր անդամները, Գլխավոր քարտուղարը և հաշվիչ հանձնաժողովի անդամները համաձայնության են եկել քվեարկության արդյունքների վերաբերյալ, ապա արդյունքները կարող են հաստատվել և հրապարակվել: Եթե Ընտրական կոմիտեի բոլոր անդամները, Գլխավոր քարտուղարը և հաշվիչ հանձնաժողովի անդամները համաձայնության չեն գալիս քվեարկության արդյունքների վերաբերյալ, ապա բոլոր ձայները վերահաշվարկվում են:

⁵ Քվեարկության երկրորդ (կամ հաջորդող) փուլի անցկացման անհրաժեշտության դեպքում քվեարկությունը պետք է կրկնվի վերոշարադրյալ հոդվածներում նշված կարգով: Անդամները պետք է տեղեկացվեն նաև քվեարկության երկրորդ (կամ հաջորդող) փուլերի նկատմամբ կիրառվող դրույթների մասին (օրինակ՝ փոփոխություններ անհրաժեշտ մեծամասնության գծով, թեկնածուների հեռացում և այլն):

⁶ Ընտրությունների յուրաքանչյուր փուլի ավարտին Ընտրական կոմիտեի նախագահը պետք է պաշտոնապես ներկայացնի արդյունքներն Անդամներին:

⁷ Գլխավոր քարտուղարը պետք է տեղադրի հանձնված և հաշվարկված քվեաթերթիկներն այդ նպատակի համար նախատեսված ծրարների մեջ: Ծրարների վրա ապա դրվում է Ընտրական կոմիտեի նախագահի ստորագրությունը և կնիք: Գլխավոր քարտուղարությունը պետք է պահպանի այդ ծրարները և ոչնչացնի դրանք Ժողովից քսանհինգ (25) օր անց:

V. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20 Փաստաթղթերի արխիվացում և գաղտնիություն

¹ Ընտրական կոմիտեն և Բողոքարկման կոմիտեն բոլոր պաշտոնական փաստաթղթերը, ինչպես նաև ընտրությունների ընթացքում իրենց տրամադրված բոլոր փաստաթղթերը, պետք է հանձնեն գլխավոր քարտուղարությանը, որը պատասխանատու է այդ փաստաթղթերի արխիվացման համար:

the Electoral Committee. When all the members of the Electoral Committee, the General Secretary and the scrutineers have agreed on the vote totals, the result may be confirmed and announced. If all the members of the Electoral Committee the General Secretary and the scrutineers do not agree on the vote totals, the vote shall be completely recounted.

⁵ If a second (or subsequent) round of voting is required, the voting procedure shall be repeated in accordance with the above articles. The Members are also to be informed of the statutory provisions that apply for the second (and subsequent) rounds of voting (e.g. any changes to the majority required, elimination of candidates, etc.).

⁶ After each round of the election, the chairperson of the Electoral Committee shall officially declare the results to the Members.

⁷ The General Secretary shall put the ballot papers that have been collected and counted into envelopes intended for this purpose. The envelopes shall then be signed by the chairperson of the Electoral Committee and sealed. The general secretariat shall keep these envelopes and destroy them twenty-five (25) days after the Assembly.

V. FINAL PROVISIONS

Article 20 Archiving of documents and confidentiality

¹ The Electoral Committee and the Appeals Committee shall hand over all official documents as well as all documents provided to them during the electoral process to the general secretariat, which shall be responsible for archiving them.

² Ընտրական կոմիտեի և Բողոքարկման կոմիտեի անդամները պետք է ապահովեն ընտրության ընթացքում իրենց տրամադրված ամբողջ տեղեկատվության և բոլոր փաստաթղթերի լիարժեք գաղտնիությունը: Նշված պարտականությունն ուժի մեջ է մնում անժամկետ՝ պահպանվելով համապատասխան ընտրական գործընթացի ավարտից հետո: Բացի այդ, նշված կոմիտեի անդամները չպետք է պահպանեն (էլեկտրոնային կամ այլ եղանակով) ընտրությունների ընթացքում իրենց տրամադրված որևէ փաստաթուղթ:

² The members of the Electoral Committee and of the Appeals Committee shall maintain absolute confidentiality and secrecy with respect to any information and documents made available to them during the course of the electoral process. Such obligation shall remain for an indefinite period following the relevant electoral process. Furthermore, they shall not retain any documents (electronic or otherwise) supplied to them during the electoral process.

Հոդված 21 Սույն փաստաթղթով չկարգավորված հարցեր

Article 21 Matters not provided for herein

¹ Ընտրական ժողովին առնչվող բոլոր վարչական և տեխնիկական հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն Ընտրական կանոնակարգով կամ ՀՖՖ-ի Կանոնադրությամբ և կանոնակարգերով, ենթակա են կարգավորման Ընտրական կոմիտեի կողմից, որի որոշումները վերջնական են:

¹ All matters relating to the administrative and technical organisation of the elective Assembly that are not covered by this Electoral Code or by the Statutes and regulations of FFA shall be ruled upon by the Electoral Committee, whose decision shall be final.

² Ընտրությունների անցկացմանն առնչվող բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն Ընտրական կանոնակարգով կամ ՀՖՖ-ի Կանոնադրությամբ և կանոնակարգերով, ենթակա են կարգավորման Ընտրական կոմիտեի կողմից, որի որոշումները վերջնական են:

² All matters relating to the running of the elections that are not covered by this Electoral Code or by the Statutes and regulations of FFA shall be ruled upon by the Electoral Committee, whose decision shall be final.

Հոդված 22 Ուժի մեջ մտնելը

Article 22 Enforcement

Սույն Ընտրական կանոնակարգը հաստատվել է Ժողովի կողմից Երևան քաղաքում 2020 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտնում 2020 թվականի դեկտեմբերի 28-ին:

This Electoral Code was adopted at the Assembly in Yerevan on December 28, 2020 and comes into force on December 28, 2020.

Երևան, Հայաստանի Հանրապետություն
28 դեկտեմբեր 2020 թվական

Yerevan, Republic of Armenia
December 28, 2020

Մաս 1. Ընդհանուր դրույթներ

¹ ՀՖՖ-ում առանցքային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ այդ պաշտոնները զբաղեցնելու թեկնածուների (այսուհետ՝ «թեկնածուներ») կամ «պաշտոնատար անձինք») համապատասխանության ստուգումներն իրականացվում են համապատասխան մարմնի կողմից՝ Կանոնադրության, Ընտրական կանոնակարգի և սույն Հավելվածի դրույթների համաձայն:

² Թեկնածուները կամ պաշտոնատար անձինք պետք է բավարարեն ներքոշարադրյալ մաս 2 և մաս 3-ում ներկայացված՝ ուսումնասիրության և անձնական տվյալների բացահայտման պահանջներին: Նախքան ուսումնասիրության գործընթացը, յուրաքանչյուր թեկնածու կամ պաշտոնատար անձ պետք է տա իր համաձայնությունը՝ կապված տվյալ գործընթացի հետ, լրացնելով համապատասխանության ստուգումն իրականացնող մարմնի կողմից տրամադրված ձևաթուղթը: Նման գրավոր համաձայնություն չտալու դեպքում կհամարվի, որ տվյալ թեկնածուն կամ պաշտոնատար անձը համապատասխանության ստուգման պահանջներին չի բավարարում:

³ Թեկնածուները կամ պաշտոնատար անձինք մշտապես պետք է գործեն բարեխղճորեն և պատրաստակամորեն տրամադրեն անհրաժեշտ տվյալները՝ ողջամիտ ժամկետներում նման պահանջ ստանալու դեպքում: Եթե տվյալ թեկնածուն կամ պաշտոնատար անձը չի համագործակցում համապատասխանության ստուգումն իրականացնող մարմնի հետ, ապա կհամարվի, որ այդ թեկնածուն կամ պաշտոնատար անձը համապատասխանության ստուգման պահանջներին չի բավարարում:

⁴ Կհամարվի, որ թեկնածուն կամ պաշտոնատար անձը համապատասխանության ստուգման պահանջներին չի բավարարում, եթե նա.

ա) որևէ դատարանի կողմից ենթարկվել է քրեական պատասխանատվության կամ կարգապահական պատասխանատվության, հատկապես, եթե նշյալ իրավախախտումն իրենից ներկայացնում է էական խախտում և ոչ աննշան իրավախախտում կամ ընթացակարգային խախտում,

բ) ճանաչվել է մեղավոր և/կամ այնպիսի պատժամիջոցի է ենթարկվել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի Էթիկայի հանձնաժողովի, ՈԻԵՖԱ-ի Էթիկայի և կարգապահական մարմնի կամ սպորտային բնագավառում գործող որևէ այլ համապատասխան մարմնի կողմից, որը լուրջ խոչընդոտ կհանդիսանա համապատասխան պաշտոնը զբաղեցնելու համար:

⁵ Ղեկավարվելով սույն հավելվածի համաձայն իրականացվող համապատասխանության ստուգումների շրջանակներում ձեռք բերվող տեղեկատվության և տվյալների բացահայտման և տրամադրման վերաբերյալ կիրառվող դրույթներով՝ այդ ամբողջ տեղեկատվությունը և տվյալները համապատասխանության ստուգումն իրականացնող մարմնի կողմից պետք է դիտարկվեն որպես հույժ գաղտնի:

Մաս 2. Ուսումնասիրության գործընթաց

¹ Ուսումնասիրության գործընթացի սկզբում յուրաքանչյուր թեկնածու կամ պաշտոնատար անձ պետք է անցնի նույնականացման գործընթաց (այսուհետ՝ «Նույնականացման գործընթաց»): Այդ նպատակով թեկնածուն կամ պաշտոնատար անձը համապատասխանության ստուգումն իրականացնող մարմնին պետք է ներկայացնի իր գործող անձնագրի պատճենը: Նույնականացման գործընթացը ներառում է հետևյալ տվյալների ստուգում.

ա) անուն(ներ) և ազգանուն(ներ),

բ) բնակության հասցե,

գ) ծննդյան ամսաթիվ և վայր,

դ) քաղաքացիություն/քաղաքացիություններ:

2 Յուրաքանչյուր թեկնածու կամ պաշտոնատար անձ պետք է լրացնի ներքոշարադրյալ մաս 3-ում ներկայացված հարցաթերթը:

3 Համապատասխանության ստուգումն իրականացնող մարմինը կարող է անցկացնել անկախ ուսումնասիրություն և/կամ հետաքննություն՝ որոշակի թեկնածուի կամ պաշտոնատար անձի մասին լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով, որը կարող է ներառել տեղեկություններ միջնորդների և փոխկապակցված անձանց, զբաղեցրած պաշտոնների, շահերի բախման հնարավոր դեպքերի, նշանակալի մասնակցությունների, ինչպես նաև քաղաքացիական և քրեական վարույթների/հետաքննությունների մասին:

Մաս 3. Հարցաթերթ

Անուն(ներ).	
Ազգանուն(ներ).	
Բնակության հասցե.	
Ծննդյան ամսաթիվ և վայր.	
Քաղաքացիություն/քաղաքացիություններ.	
Մասնագիտություն.	

1 Արդյո՞ք նախկինում պատասխանատվության ենթարկվել եք որևէ դիտավորյալ հանցանքի կամ այնպիսի իրավախախտման կատարման համար, որը հանդիսանում է ՖԻՖԱ-ի Էթիկայի կանոնակարգի 5-րդ գլխի 2-րդ մասով, ՈԻԵՖԱ-ի Կարգապահական կանոնակարգի 1-ին գլխի 3-րդ հոդվածով և ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 5-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտում:

Ոչ Այո

Եթե «այո», ապա ներկայացրեք մանրամասները.

2 Արդյո՞ք սպորտային բնագավառում գործող որևէ դեկավար մարմնի կողմից նախկինում Ձեր հանդեպ կիրառվել են կարգապահական կամ նմանատիպ բնույթի պատժամիջոցներ այնպիսի արարքների համար, որոնք հանդիսանում են ՖԻՖԱ-ի Էթիկայի կանոնակարգի 5-րդ գլխի 2-րդ մասով, ՈԻԵՖԱ-ի Կարգապահական կանոնակարգի 1-ին գլխի 3-րդ հոդվածով և ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 5-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտում:

Ոչ Այո

Եթե «այո», ապա ներկայացրեք մանրամասները.

3 Արդյո՞ք Ձեր հանդեպ ներկայումս իրականացվում է որևէ քաղաքացիական, քրեական կամ կարգապահական վարույթ կամ հետաքննություն:

Ոչ Այո

Եթե «այո», ապա ներկայացրեք մանրամասները.

4 Ես տեղյակ եմ, որ իմ հանդեպ կիրառվում են ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կանոնակարգով, Կանոնադրությամբ և ՀՖՖ-ի այլ կանոնակարգերով սահմանված այն դրույթները, որոնք վերաբերում են համապատասխանության ապահովմանը, և հավաստում եմ, որ լիովին բավարարում եմ այդ պահանջներին:

5 Ներկայումս ֆուտբոլի բնագավառում զբաղեցնում եմ հետևյալ պաշտոնները.

6 Հետևյալ փաստերը և հանգամանքները կարող են հանգեցնել ինձ առնչվող շահերի բախման (տես, մասնավորապես, Կանոնադրության 23 կետի 9-րդ ենթակետը).

7 Նշումներ և դիտարկումներ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ համապատասխանության ստուգման շրջանակներում.

8 Ես տեղյակ եմ և համաձայն եմ, որ սույն հարցաթերթը տրամադրվի ՀՖՖ-ի համապատասխան մարմնի անդամներին:

9 Ես տեղյակ եմ և հաստատում եմ, որ պետք է տեղեկացնեմ համապատասխանության ստուգումն իրականացնող մարմնին ցանկացած էական փաստերի և հանգամանքների մասին, որոնք կառաջանան համապատասխանության ստուգման ավարտից հետո:

10 Ես տեղյակ եմ և հաստատում եմ, որ պարտավոր եմ լիովին համագործակցել և ներկայացնել բոլոր փաստերը, որոնք էական կլինեն իմ հանդեպ իրականացվող համապատասխանության ստուգման շրջանակներում: Մասնավորապես, ըստ պահանջի, պարտավոր եմ տրամադրել իմ տրամադրության տակ եղած ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն կամ որևէ այլ բնույթի նյութ: Բացի այդ, պարտավոր եմ ձեռք բերել և տրամադրել ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն կամ որևէ այլ բնույթի նյութ, որն իմ տրամադրության տակ չէ, սակայն ես կարող եմ ստանալ այն:

11 Ես տեղյակ եմ և հաստատում եմ, որ համապատասխանության ստուգումն իրականացնող մարմինը կարող է նաև պահանջել տեղեկատվություն հնարավոր պատժամիջոցների վերաբերյալ (վերոշարադրյալ հարց 1 և հարց 2), որոնք կիրառվել են անմիջապես ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կամ համապատասխան համադաշնության, ինչպես նաև այլ հաստատությունների կողմից, ինչպիսիք են, օրինակ, Լոզանում (Շվեյցարիա) գործող Սպորտային արբիտրաժային դատարանը կամ Միջազգային օլիմպիական կոմիտեն: Այդ կապակցությամբ սույնով ազատում եմ համապատասխան հաստատություններին՝ նման տեղեկատվության գաղտնիության ապահովմանն առնչվող ցանկացած պարտավորությունից:

12 Ես տեղյակ եմ և հաստատում եմ, որ համապատասխանության ստուգումն իրականացնող մարմինն իրավունք ունի լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերել իմ անձի վերաբերյալ, սույն Հավելվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն:

(Վայր և ամսաթիվ)

(Ստորագրություն)

Part 1: General provisions

- ¹ The integrity checks with regard to candidates for, and holders of, official positions within FFA that are subject to such checks (“candidates or holders”) shall be conducted by the relevant body in accordance with the provisions of the Statutes, Electoral Code and this Annex.
 - ² Candidates or holders are obliged to comply with the screening and self-disclosure process as outlined in parts 2 and 3 below. Prior to the screening process, every candidate or holder shall give his written consent to said process through a form provided by the relevant body conducting the integrity check. If such written consent is not provided, the candidate or holder shall be deemed not to have passed the integrity check.
 - ³ Candidates or holders shall act in good faith at all times and shall fully collaborate to establish the relevant facts upon reasonable notice. If the candidate or holder concerned does not cooperate with the body competent to conduct the integrity check, the candidate or holder shall be deemed not to have passed the integrity check.
 - ⁴ The candidate or holder shall be deemed not to have passed the integrity check, if he:

 - a) has been subject to criminal convictions or disciplinary sanctions by a state court, in particular if the offence in question was a substantive issue and not a minor infraction or procedural misconduct;
 - b) has been found guilty and/or sentenced by the FFA, FIFA Ethics Committee, UEFA Ethics and Disciplinary Body or any other sporting body with a sanction that would seriously put into question the discharge of the office concerned.
 - ⁵ Subject to the relevant provisions regarding disclosure and forwarding of the information and related data obtained in the context of integrity checks in accordance with this annexe, all such information and related data must be treated as strictly confidential by the body conducting the integrity check concerned.
-

Part 2: Screening process

- ¹ At the beginning of the screening process, every candidate or holder shall undergo an identification check (“ID check”). In this context, the candidate or holder shall submit a valid copy of his passport to the body in charge of performing the integrity check. The ID check shall include verification/identification of the following elements:

 - a) name(s) and surname(s);
 - b) address of residence;
 - c) date and place of birth;
 - d) nationality/nationalities.
- ² Every candidate or holder shall complete the questionnaire contained in part 3 below.
- ³ The body in charge of performing the integrity check may conduct independent research and/or investigations in order to obtain further relevant information on a particular candidate or holder, which may include information on intermediaries and related parties, mandates, potential conflicts of interest and significant participations as well as civil and criminal proceedings/investigations.

Part 3: Questionnaire

First name(s):	
Surname(s):	
Address of residence:	
Date and place of birth:	
Nationality/nationalities:	
Profession:	

1 Have you previously been convicted by a final decision of any intentional indictable offence or of any offence corresponding to a violation of the rules of conduct set out in part II section 5 of the FIFA Code of Ethics, in Title I, Section III of UEFA Disciplinary Regulations and in Section 5 of Disciplinary and Ethics Code of FFA?

No Yes

If yes, please specify:

2 Has a sports governing body ever imposed any disciplinary or similar sanction or measure on you in the past for actions which amount to a violation of the rules of conduct set out in part II section 5 of the FIFA Code of Ethics, in Title I, Section III of UEFA Disciplinary Regulations and in Section 5 of Disciplinary and Ethics Code of FFA?

No Yes

If yes, please specify:

3 Are you the subject of any pending civil, criminal or disciplinary proceedings or investigations?

No Yes

If yes, please specify:

4 I am fully aware that I am subject to the provisions of the Disciplinary and Ethics Code of FFA and to the provisions of the Statutes and other regulations of FFA that may address integrity issues, and I fully comply with such provisions.

5 I currently hold the following positions in football:

6 The following facts and circumstances may give rise to potential conflicts of interest regarding me (cf. in particular art. 23 par. 10 of the Statutes):

7 Remarks and observations which may be of potential relevance in the context of the integrity check:

8 I am fully aware and agree that this questionnaire is made available to the members of the appropriate body of FFA.

- ⁹ I am fully aware and confirm that I must notify the body conducting the integrity check of any relevant facts and circumstances arising after the integrity check has been completed.
- ¹⁰ I am fully aware and confirm that I am obliged to collaborate fully to establish the relevant facts with regard to the integrity check to which I am subject. In particular, I will comply with requests for any documents, information or any other material of any nature held by me. In addition, I will comply with the procurement and provision of documents, information or any other material of any nature not held by me but which I am entitled to obtain.
- ¹¹ I am fully aware and confirm that the body conducting the integrity check may also request information on possible sanctions (questions 1 and 2 above) directly from FIFA, UEFA or the relevant confederation as well as from other institutions such as the Court of Arbitration for Sport in Lausanne, Switzerland, or the International Olympic Committee. In this regard, I hereby release the relevant institutions from any obligation of confidentiality relating to the information concerned.
- ¹² I am fully aware and confirm that the body conducting the integrity check may collect further information on me in accordance with part 2 par. 3 of this annex.

(Place and date)

(Signature)